ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ն ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ 18/66

ք. Վանաձոր «29» օգոստոսի 2018թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖՈՒԼ ՏՐԱՍՏ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արսեն Գալստյան-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) Ն 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձոր համայնքի փողոցների կապիտալ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 45 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված Ն 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր : Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

ատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ

արաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 99360000 (իննսունինը միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 16560000(տասնվեց միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 36960000 (երեսունվեց միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 6160000 (վեց միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 14520000(տասնչորս միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ որից 2420000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին 47880000 (քառասունյոթ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 7980000 (յոթ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն[2]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[3].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[4]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

[2] *Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս սույն կետից հանվում են «որից -------- (----------) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:*

[3] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[4] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները կատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[5]:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում

---

[5] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

ավելված թիվ 1.1
«29» օգոստոսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ 18/66ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա է հանդիսանում Վանաձոր համայնքի փողոցների կապիտալ հիմնանորոգման աշխատանքները, որոնք ընդգրկում են՝

- Ա/բետոնե ծածկույթի ֆռեզ 4 սմ հաստ
- Շին աղբի բարձում ինքնաթափին ձեռքով
- Շինաղբի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 10կմ
- Հողային և հարթեցման աշխատանքների իրականացում
- Որոշ փողոցներում ե/բ ջրահեռացման վաքերի կառուցում
- Որոշ փողոցներում մայթերի նորոգում
- Խճային հիմքի կառուցում
- Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Ա» տիպի ա/բետոնով /5սմ/
- Դիռահորերի պակասող թուջե մտոցների տեղադրում

Աշխատանքները կատարել համաձայն հետևյալ նորմաների և հաստատված նախագծով.

ՀՀ ՇՆ IV-11.05.02-99 - Ավտոմոբիլային ճանապարհներ

ГОСТ Р 50597-93 ямочный ремонт асфальтового покрытия

Աշխատանքներն իրականացվելու են հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232539024
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՖՈՒԼ ՏՐԱՍՏ»ՍՊԸ
Ք. Երևան,Նալբանդյան50շ,բն.80
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ
ՀՎՀՀ 02575313
Հ/Հ 220410125409000

----------Ա. Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«29» օգոստոսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ 18/66ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ն ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Վանաձոր համայնքի Զերկասի,Մաշտոցի, Սասունցիների փողոցի և Շինարարներ-Իսահակյան-Ներսիսյան փողոցները միացնող հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	29.08.2018	12.10.2018
2	Վանաձոր համայնքի Վերածննդի, Փարաջանովի և Մալաթիայի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ	29.08.2018	12.10.2018
3	Վանաձոր համայնքի Լազյան,Մոսկովյան և Շիրակացի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ	29.08.2018	12.10.2018
ԸՆԴԱՄԵՆԸ		29.08.2018	12.10.2018

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232539024
ՀՎՀՀ 06901936

_____/Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՖՈՒԼ ՏՐԱՍՏ»ՍՊԸ
Ք. Երևան,Նալբանդյան50շ,բն.80
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ
ՀՎՀՀ 02575313
Հ/Հ 220410125409000

_____Ա. Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

ատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց
վել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ ատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն ն:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վանաձորի համայնքապետարան	«ՖՈՒԼ ՏՐԱՍ»ՍՊԸ
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	Ք. Երևան,Նալբանդյան50շ,բն.80
Կենտրոնական գանձապետարան	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ
Հ/Հ900232539024	ՀՎՀՀ 02575313
ՀՎՀՀ 06901936	Հ/Հ 220410125409000
---------- Մ.Ասլանյան	---------- Ա. Գալստյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«29» օգոստոսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ 18/66*ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[6]*

«Վանաձորի համայնքի փողոցների կապիտալ հիմնանորոգման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Չերկասի փողոցի կապիտալ նորոգման						
					Հազ. ՀՀ դրամ	
Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը
1	2	3	4	5	6	7
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	մ^2	140.00	0.426	59.640
2	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.0056	613.846	3.438
3	Գ-130-10	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	9.52	2.714	25.837
4	1-1612 1-1618	Ճանապարհային տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով	1000մ^3	0.268	183.858	49.274
5	1-1551	Բնահողի մշակում մեխանիզմով 3-րդ կարգի գրունտներում վաքերի տեղադրման համար	1000մ^3	0.035	619.973	21.699
6	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով	մ^3	15.00	2.801	42.015
7	1-1592	ավելորդ բնահողի և քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.3222	613.846	197.781
8	Գ-130-10	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	452.34	2.714	1227.651
9	1-968	Նախապատրաստական շերտի կառուցում փափուկ բնահողից /հաստ. 100մմ/	մ^3	1.50	1.171	1.757
10	1-1235	Հավաքովի ե/բ վաքերի տեղադրում /410x400x1000/	մ	145.00	5.114	741.530
11		Հավաքովի ե/բ վաքեր	մ^3	8.77	166.178	1457.381
12	9-122	Մետաղական ճաղավանդակի կառուցում	տն	0.354	96.732	34.243
13		Անկյունակ L50x5	մ	28.80	2.604	74.995
14		Պողպատե ձող Φ25	տն	0.245	624.982	153.121
15	15-621 164-7	Մետաղ.կոնստրուկցիա ների յուղաներկում 2անգամ	մ^2	11.00	0.948	10.428
16	27-38-1	ավազակոպիճային շերտ 10սմ	100մ^2	10.70	43.559	466.081
17	27-144	խճային հիմք 10սմ	100մ^2	10.70	104.320	1116.224
18	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	10.70	466.337	4989.806
19	27-169	Մայթի ծածկույթի կառուցում միաշերտ մանրահատիկ «Դ» տիպի ա/բետոնով /3սմ/	100մ^2	2.080	305.294	635.012

[6] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

		ԸՆԴԱՄԵՆԸ				11307.912
		ԱԱՀ	20%			2261.582
		ԸՆԴԱՄԵՆԸ				13569.494
Մաշտոցի փողոցի կապիտալ նորոգման						
Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը
1	2	3	4	5	6	7
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	մ^2	2362.21	0.426	1006.301
2	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.096	613.846	58.929
3	Գ-130-10	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	153.60	2.714	416.870
4	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով եզրաքարերի հիմքերի տակ	մ^3	1.50	2.801	4.202
5	1-1592	գոյություն ունեցող և առաջացած բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.0015	613.846	0.921
6	Գ-130-10	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 10կմ	տն	2.10	2.714	5.699
7	27-36	խարխլված բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	5.00	1.120	5.600
8	27-86	խարխլված եզրաքարերի վերատեղադրում օտագործելով ապամահտաժ-վածը	100 գծմ	0.050	414.719	20.736
9	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	23.63	466.337	11019.543
10		բացակայող թուջե կափարիչի տեղադրում	հատ	1.00	60.199	60.199
		ԸՆԴԱՄԵՆԸ				12599.001
		ԱԱՀ	20%			2519.800
		ԸՆԴԱՄԵՆԸ				15118.801
Սասունցիների փողոցի կապիտալ նորոգման						
Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը
1	2	3	4	5	6	7
1	1-1612 1-1618	Ճանապարհային տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով	1000մ^3	0.450	183.858	82.736
2	1-1592	ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.4500	613.846	276.231
3	Գ-130-10	ավելորդ բնահողի բարձում տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	630.00	2.714	1709.820
4	27-38-1	ավազակոպիճային շերտ 6սմ	100մ^2	30.00	43.559	1306.770
5	27-144	խճային հիմք 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	30.00	201.803	6054.090

6	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	30.00	466.337	13990.110
		ԸՆԴԱՄԵՆԸ				23419.757
		ԱԱՀ	20%			4683.951
		ԸՆԴԱՄԵՆԸ				28103.708
Շինարարներ- Իսահակյան-Ներսիսյան փողոցները միացնող հատվածի կապիտալնորոգման						
Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը
1	2	3	4	5	6	7
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	մ^2	125.00	0.426	53.250
2	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.0050	613.846	3.069
3	Գ-130-7	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթա-փով 7կմ հեռ.	տն	8.50	2.172	18.462
4	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով եզրաքարերի հիմքերի տակ	մ^3	1.70	2.801	4.762
5	1-1592	գոյություն ունեցող և առաջցած բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.0017	613.846	1.044
6	Գ-130-7	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 10կմ	տն	2.38	2.172	5.169
7	27-36	խարխլված բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	12.00	1.120	13.440
8	27-86	խարխլված եզրաքարերի վերատեղադրում օտագործելով ապամաիտաժ-վածը	100 գծմ	0.120	327.369	39.284
9	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	1.25	466.337	582.921
		ԸՆԴԱՄԵՆԸ				721.401
		ԱԱՀ	20%			144.280
		ԸՆԴԱՄԵՆԸ				865.682
		ԸՆԴՀԱՆՈՒՐԸ 3 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ				57657.685

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մեկ միավորի արժեքի մեջ ներառված են վերադիր ծախսերը, շահույթը, ժամանակավոր շենքերի և շինությունների արժեքը, կլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած ծախսը, շինաղբի տեղափոխման ծախսը, չմախատեսված ծախսերը

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մալաթիայի փողոցի կապիտալ նորոգման						
					Հազ. ՀՀ դրամ	
Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը

1	2	3	4	5	6	7
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	մ^2	300.00	0.426	127.800
2	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.0120	613.846	7.366
3	Գ-130-7	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթա-փով 7կմ հեռ.	տն	20.40	2.172	44.309
4	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով եզրաքարերի հիմքերի տակ	մ^3	4.00	2.801	11.204
5	1-1592	գոյություն ունեցող և առաջացած բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.004	613.846	2.455
6	Գ-130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 3կմ	տն	5.60	1.412	7.907
7	27-36	խարխլված բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	25.00	1.120	28.000
8	27-86	խարխլված եզրաքարերի վերատեղադրում օտագործելով ապամաիտաժ-վածը	100 գծմ	0.250	414.719	103.680
9	27-38-1	ավազակոպիճային շերտ 6սմ	100մ^2	4.00	43.559	174.236
10	27-144	խճային հիմք 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	4.00	201.803	807.212
11	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	9.00	466.337	4197.033
		ԸՆԴԱՄԵՆԸ				**5511.202**
		ԱԱՀ	20%			1102.240
		ԸՆԴԱՄԵՆԸ				**6613.443**

. Փարաջանովի փողոցի կապիտալ նորոգման

Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը
1	2	3	4	5	6	7
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	մ^2	600.00	0.426	255.600
2	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.0240	613.846	14.732
3	Գ-130-3	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթա-փով 3կմ հեռ.	տն	40.80	1.412	57.610
4	1-1612 1-1618	ճանապարհային տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով	1000մ^3	0.015	183.858	2.758
5	1-1592	ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.0150	613.846	9.208
6	Գ-130-3	ավելորդ բնահողի բարձում տեղափոխում ավտոինքնաթա-փով 3կմ հեռ.	տն	21.00	1.412	29.652
7	27-38-1	ավազակոպիճային շերտ 6սմ	100մ^2	9.00	43.559	392.031
8	27-144	խճային հիմք 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	9.00	201.803	1816.227
9	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	15.00	466.337	6995.055
		ԸՆԴԱՄԵՆԸ				**9572.872**
		ԱԱՀ	20%			1914.574
		ԸՆԴԱՄԵՆԸ				**11487.447**

Վերածնունդի փողոցի կապիտալ նորոգման

Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը

1	2	3	4	5	6	7
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	մ^2	305.00	0.426	129.930
2	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.0122	613.846	7.489
3	Գ-130-7	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթա-փով 7կմ հեռ.	տն	20.74	2.172	45.047
4	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով եզրաքարերի հիմքերի տակ	մ^3	5.00	2.801	14.005
5	1-1592	գոյություն ունեցող և առաջցած բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.005	613.846	3.069
6	Գ-130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 3կմ	տն	7.00	1.412	9.884
7	27-36	խարխլված բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	18.00	1.120	20.160
8	27-86	խարխլված եզրաքարերի վերատեղադրում օտագործելով ապամաիտաժ-վածը	100 գծմ	0.180	414.719	74.649
9	27-144	խճային հիմք 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	2.40	201.803	484.327
10	27-164-2 27-165-2	Ճածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	6.10	466.337	2844.656
11		բացակայող թուջե կափարիչի տեղադրում	հատ	2.00	60.199	120.398
		ԸՆԴԱՄԵՆԸ				**3753.615**
		ԱԱՀ	20%			750.723
		ԸՆԴԱՄԵՆԸ				**4504.338**
		ԸՆԴՀԱՆՈՒՐԸ 4 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ				22605.227

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մեկ միավորի արժեքի մեջ ներառված են վերադիր ծախսերը, շահույթը, ժամանակավոր շենքերի և շինությունների արժեքը, կլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած ծախսը, շինաղբի տեղափոխման ծախսը, չնախատեսված ծախսերը

ՉԱՓԱԲԱԺԻՆ 3
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Լազյան փողոցի կապիտալ նորոգման						
					Հազ. ՀՀ դրամ	
Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը
1	2	3	4	5		
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	մ^2	3100.00	0.426	1320.600
2	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.124	613.846	76.117
3	Գ-130-7	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթա-փով 7կմ հեռ.	տն	210.80	2.172	457.858
4	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով եզրաքարերի հիմքերի տակ	մ^3	7.00	2.801	19.607
5	1-1592	գոյություն ունեցող և առաջցած բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.007	613.846	4.297

6	Գ-130-7	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 7կմ	տն	9.80	2.172	21.286
7	27-36	խարխլված բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	20.00	1.120	22.400
8	27-86	խարխլված եզրաքարերի վերատեղադրում օտագործելով ապամահտաժ-վածը	100 գծմ	0.200	414.719	82.944
9	27-144	խճային հիմք 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	2.50	201.803	504.508
10	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	36.70	466.337	17114.568
11		բացակայող թուջե կափարիչի տեղադրում	հատ	1.00	60.199	60.199
		ԸՆԴԱՄԵՆԸ				19684.382
		ԱԱՀ	20%			3936.876
		ԸՆԴԱՄԵՆԸ				23621.259

Մոսկովյան փողոցի կապիտալ նորոգման

Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը
1	2	3	4	5	6	7
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	մ^2	2100.00	0.426	894.600
2	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.0840	613.846	51.563
3	Գ-130-7	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթա-փով 7կմ հեռ.	տն	142.80	2.172	310.162
4	1-1612 1-1618	ճանապարհային տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով	1000մ^3	0.120	183.858	22.063
5	1-1592	գոյություն ունեցող և առաջացած բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.120	613.846	73.662
6	Գ-130-7	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 7կմ	տն	168.00	2.172	364.896
7	27-144	խճային հիմք 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	24.20	201.803	4883.633
8	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով եզրաքարերի հիմքերի տակ	մ^3	5.00	2.801	14.005
9	1-1592	գոյություն ունեցող և առաջացած բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.005	613.846	3.069
10	Գ-130-7	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 7կմ	տն	7.00	2.172	15.204
11	27-36	խարխլված բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	10.00	1.120	11.200
12	27-86	խարխլված եզրաքարերի վերատեղադրում օտագործելով ապամահտաժ-վածը	100 գծմ	0.100	414.719	41.472
13	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	49.20	466.337	22943.780

14		բացակայող թուջե կափարիչի տեղադրում	հատ	2.00	60.199	120.398
		ԸՆԴԱՄԵՆԸ				29749.706
		ԱԱՀ	20%			5949.941
		ԸՆԴԱՄԵՆԸ				35699.648

Շիրակացի փողոցի կապիտալ նորոգման

Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը
1	2	3	4	5	6	7
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	$մ^2$	2275	0.426	969.150
2	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	$1000մ^3$	0.0910	613.846	55.860
3	Գ-130-7	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթա-փով 7կմ հեռ.	տն	154.70	2.172	336.008
4	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով եզրաքարերի հիմքերի տակ	$մ^3$	2.70	2.801	7.563
5	1-1592	գոյություն ունեցող և առաջցած բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	$1000մ^3$	0.0027	613.846	1.657
6	Գ-130-7	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 10կմ	տն	3.78	2.172	8.210
7	27-36	խարխլված բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	7.00	1.120	7.840
8	27-86	խարխլված եզրաքարերի վերատեղադրում օտագործելով ապամահիտաժ-վածը	100 գծմ	0.070	327.369	22.916
9	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	$100մ^2$	22.75	466.337	10609.167
10		բացակայող թուջե կափարիչի տեղադրում	հատ	1.00	60.199	60.199
		ԸՆԴԱՄԵՆԸ				12078.570
		ԱԱՀ	20%			2415.714
		ԸՆԴԱՄԵՆԸ				14494.284
		ԸՆԴՀԱՆՈՒՐԸ 3 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ				73815.190

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մեկ միավորի արժեքի մեջ ներառված են վերադիր ծախսերը, շահույթը, ժամանակավոր շենքերի և շինությունների արժեքը, կլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած ծախսը, շինաղբի տեղափոխման ծախսը, չնախատեսված ծախսերը

*** Կապալառուն աշխատանքները կատարում է համապատասխան հասցեներում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232539024
ՀՎՀՀ 06901936

/Մ.Ասլանյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՖՈՒԼ ՏՐԱՍՏ»ՍՊԸ
Ք. Երևան, Նալբանդյան50շ,բն.80
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ
ՀՎՀՀ 02575313
Հ/Հ 22041012540900 0

Ա. Գալստյան
/ստորագրություն/ Կ.Տ

հավելված թիվ 1.1
«29» օգոստոսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ 18/66ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա է հանդիսանում Վանաձոր համայնքի փողոցների կապիտալ հիմնանորոգման աշխատանքները, որոնք ընդգրկում են՝

- Ա/բետոնե ծածկույթի ֆռեզ 4 սմ հաստ
- Շին աղբի բարձում ինքնաթափին ձեռքով
- Շինաղբի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 10կմ
- Հողային և հարթեցման աշխատանքների իրականացում
- Որոշ փողոցներում ե/բ ջրահեռացման վաքերի կառուցում
- Որոշ փողոցներում մայթերի նորոգում
- Խճային հիմքի կառուցում
- Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Ա» տիպի ա/բետոնով /5սմ/
- Դիռահորերի պակասող թուջե մտոցների տեղադրում

Աշխատանքները կատարել համաձայն հետևյալ նորմաների և հաստատված նախագծով.

ՀՀ ՇՆ IV-11.05.02-99 - Ավտոմոբիլային ճանապարհներ

ГОСТ Р 50597-93 ямочный ремонт асфальтового покрытия

Աշխատանքներն իրականացվելու են հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232539024
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ապանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՖՈՒԼ ՏՐԱՍՏ»ՍՊԸ
Ք. Երևան,Նալբանդյան50շ,բն.80
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ
ՀՎՀՀ 02575313
Հ/Հ 220410125409000

----------Ա. Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«29» օգոստոսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ 18/66ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ն ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Վանաձոր համայնքի Չերկասի,Մաշտոցի, Սասունցիների փողոցի և Շինարարներ-Իսահակյան-Ներսիսյան փողոցները միացնող հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	29.08.2018	12.10.2018
2	Վանաձոր համայնքի Վերածննդի, Փարաջանովի և Մալաթիայի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ	29.08.2018	12.10.2018
3	Վանաձոր համայնքի Լազյան,Մոսկովյան և Շիրակացի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ	29.08.2018	12.10.2018
ԸՆԴԱՄԵՆԸ		29.08.2018	12.10.2018

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232539024
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՖՈՒԼ ՏՐԱՍՏ»ՍՊԸ
Ք. Երևան,Նալբանդյան50շ,բն.80
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ
ՀՎՀՀ 02575313
Հ/Հ 220410125409000

----------Ա. Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
«29» օգոստոսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ 18/66ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231220	Վանաձոր համայնքի Զերկասի,Մաշտոցի, Սասունցիների փողոցի և Շինարարներ-Իսահակյան-Ներսիսյան փողոցները միացնող հատվածի հիմնանորոգման աշխատանքներ								36 960 000	36 960 000	36 960 000	36 960 000	36 960 000	36 960 000
2	45231220	Վանաձոր համայնքի Վերածննդի, Փարաջանովի և Մալաթիայի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ								14 520 000	14 520 000	14 520 000	14 520 000	14 520 000	14 520 000
3	45231220	Վանաձոր համայնքի Լազյան,Մոսկովյան և Շիրակացի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ								47 880 000	47 880 000	47 880 000	47 880 000	47 880 000	47 880 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232539024
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՖՈՒԼ ՏՐԱՍՏ»ՍՊԸ
Ք. Երևան,Նալբանդյան50շ,բն.80
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ
ՀՎՀՀ 02575313
Հ/Հ 220410125409000

----------Ա. Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ